



**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

## **Ուղեցույց**

**Ինչպես դիմել Facebook-ին  
անձնական կամ այլ տվյալները  
հեռացնելու համար**

Սոցիալական ցանցերն այսօր մարդկանց առօրյայի մի մասն են դարձել եւ մարդու կամքով կամ նրա կամքից անկախ, հաճախ նաեւ չիմացութեամբ , հավաքում, պահպանում եւ օգտագործում են անձնական տվյալներ: Անձնական տվյալների պաշտպանության գործակալության մշակած այս ուղեցույցում ներկայացնում ենք անձնական տվյալները ֆեյսբուք սոցիալական ցանցում պաշտպանելու մի քանի գործիքներ:

Նախ, եթե այլևս չեք ուզում ունենալ ձեր էջը ֆեյսբուք սոցիալական ցանցում, ապա այն կարող եք հեռացնել 2 եղանակով` ապասկտիվացում և հեռացում.

### **Ապասկտիվացում**

Այս դեպքում դուք հետգաայում ցանկացած ժամանակ կարող եք կրկին հավաքել ձեր մուտքանունն ու գաղտնաբառը եւ մտնել ձեր էջ, իսկ մինչ այդ այն անտեսանելի կլինի բոլորին, մյուս օգտատերերը չեն տեսնի ձեր էջն ու չեն կարողանա ձեզ նամակներ գրել:

### **Հեռացում**

Հեռացնելու դեպքում, երբ ֆեյսբուքը ստանում է հարցումը, մի քանի օրերի ընթացքում ամբողջովին ջնջում է ձեր էջն, ու այն այլևս հնարավոր չի լինի վերականգնել:

Ֆեյսբուքի պահուստային համակարգերում գտնվող ձեր տվյալները ջնջվում են 90 օրվա ընթացքում: Այդ ընթացքում ձեր մասին տվյալները ոչ մեկին հասանելի չեն լինում:





Պետք է հաշվի առնել նաև, որ ձեր էջը ջնջելու դեպքում նամակները չեն ջնջվում այն մարդու մոտից, ում ուղարկվել են:

# Անցանկալի ինֆորմացիան սոցիալական ցանցից հեռացնելու համար պետք է այդ մասին հաղորդել (Report) Ֆեյսբուքին

Ֆեյսբուքի քաղաքականությանը դեմ են այնպիսի հրապարակումները, որոնք պարունակում են մերկություն կամ պռոնոգրաֆիա, ատելության կոչեր, բռնություն: Ժողովրդի, էթնիկ ու ազգային ծագման, կրոնի, սեռական կյանքի դեմ արված հրապարակումները նույնպես հակասում են Ֆեյսբուքի քաղաքականությանը: Եթե դուք տեսնում եք հրապարակում կամ որևէ բովանդակություն, որը ձեր կարծիքով չի համապատասխանում Ֆեյսբուքի չափանիշներին, կարող եք բողոքել այն հեռացնելու համար: Դրա համար պետք է հենց այդ հրապարակման վրա սեղմել



Նշանին ու հետո՝ «Հայտնել վատ հրապարակման մասին» (Report): Report անելուց հետո պետք է ընտրել, թե հատկապես ինչ պատճառով նշված բովանդակությունը չպետք է լինի Ֆեյսբուքում:

- 
-  Հայտնել վատ հրապարակման մասին
  -  Պահպանել հղումը
  -  Միացնել ծանուցումներն այս հրապարակման համար
  -  Ներկառուցել

Նույն սկզբունքով կարող եք բողոքել այն լուսանկարների դեմ, որոնցում պատկերված եք նաեւ դուք՝ հակառակ ձեր ցանկության:

**What's going on?**

- It's annoying or not interesting
- I'm in this photo and I don't like it
- I think it shouldn't be on Facebook
- It's spam

*Սա նյարդայնացնող կամ անհետաքրքիր է*

*Ես այս լուսանկարում եմ, ու այն ինձ դուր չի գալիս*

*Կարծում եմ, որ սա չպետք է լինի ֆեյսբուքում*

*Սա սպամ է*

**What's wrong with this photo?**

- This is nudity or pornography  
Examples: sexual arousal, sexual acts, people soliciting sex
- This is a photo of me or my family that I don't want on Facebook  
Examples: photos from my past relationships, photos someone else posted
- This humiliates me or someone I know  
Examples: altered images of me, degrading or mocking comments
- This is inappropriate, annoying or not funny  
Examples: people I don't like, things I'm not interested in or that I don't support, memes
- Something else

*Սա մերկություն կամ պռոնոգրաֆիա է*

*Սա իմ կամ իմ ընտանիքի լուսանկարն է, որը ես չեմ ցանկանում տեսնել ֆեյսբուքում*

*Սա նսեմացնում է ինձ կամ մեկ ուրիշին*

*Սա անընդունելի է, բարկացնող կամ ոչ ծիծաղելի*

*Այլ բան*

**Այստեղ կարող եք տեսնել Report անելու ընդհանուր էջը:**

**Այստեղ կարող եք տեսնել, թե ինչպես է պետք բողոքել տարատեսակ բովանդակությունն պարունակող հրապարակումների դեմ:**

**Տվյալների պաշտպանության մասին ֆեյսբուքի քաղաքականությանը կարող եք ծանոթանալ այստեղ**